Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2026թվականի մարտի 3-ին, ժամը 15:00-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ»-ում՝ Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ) տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ – վաճառք՝ 3 լոտով:

Վաճառվում են՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 5-րդ փողոց, 3/2 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0442-0054 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.10294 հեկտար մակերեսով հողամասը 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով:

Լոտ 2. Համայնք Ալավերդի, գյուղ Այգեհատ, 15-րդ փողոց, 4 հասցեում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-014-0014-0028 ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.70764 հեկտար մակերեսով հողամասը 7 500 000 (յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով:

Լոտ 3. Համայնք Ալավերդի, Ճոճկան գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-069-0264-0072 ծածկագրով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահեղ հողատեսքի 1.102 հեկտար մակերեսով հողամասը 1 800 000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով:

Աճուրդի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5%:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Հողամասերի հարևանությամբ գոյություն ունեն ընդհանուր օգտագործման մոտեցման ճանապարհ:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2026թ. փետրվարի 25-ը, ժամը 17:00-ն, հայտերի ընդունման հասցեն է՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, 410 սենյակ:

Աճուրդի պայմանների մանրամասներին՝ հողամասի ելակետային տվյալներին, հողամասի հատակագծին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Ալավերդու համայնքապետարան, (ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ 8/1, հեռ.՝ /0253/2-41-00):

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ